# ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ

ՇԱՐԱԴԻՐՔ

ԳՐ․ Պ․ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ Տ․ ՑԱՐԱԴԱՑԵԱՆ

Ա․ ՏԱՐԻ․ Ա․ ՇՐՋԱՆ — 1862 — ԹԻՒ 4․ ՄԱՐՏ 20



Հրատարակի ամիսը երկու անգամ․
Վեցամսեայ գինն է 8 ֆրանգ․
Խմբիրեն գնալու ճամբու ծախքը առնողին վրայ է․
Ստորագրութիւնները շրջանին սկիզբէն կսկսին․
Հանդէսիս վերաբերեալ որ եւ իցէ նամակ եւ գրութիւն տնօրէնին պիտի ուղղուի․
Ստորագրութեան տեղերն են․

Իզմիր՝ Ֆուճիկի գրատնեակը ; կիրիթ խան, թիւ 3․
Կ․ Պոլիս, մեծարգոյ Խ․ Թ․ Գալճէնտէրեանին սենեակը, Պալըք պազար կամուրջին գլուխը․ եւ Ընթերցասիրաց ընկերութեան ընթերցարանը, Մեծ նոր խան, թիւ 6․
Հալէպ, մեծարգոյ Յ․ Ս․ Քիւրքճեանօֆ․
Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon, 26.
Մանչեսթեր, D. Ekisler, George Street, 78.


## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ՀԱՄԱՌՕՏ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Տե՛ս Թիւ 2․ Էջ 11)․

Բ․

Ծերոց հետ վարուելու կերպ․ —

1․ Պարտաւոր ենք միշտ ծերերը պատուել և յարգել ։

2․ Բարի ծերոց հետ բարեկամութիւն ընելը՝ մարդ հասարակութեան աչքէ յարգելի կ՚ընէ ։

3․ Ծերերը շատ բանի փորձառութիւն ունենալնուն և շատ բան լսած և տեսած ըլլալնուն համար՝ կարող են մարդկային ընկերութեան հարկաւոր եղած խրատները տալ մեզ ։

4․ Ծերերուն կատարելութիւնը առջևնիս օրինակ ունենալով՝ մեր անկատարութիւնը կը ճանչնանք, և անոնցմէ խելք կը սորվինք ։

5․ Պղատոն փիլիսոփայն կ՚ըսէ թէ “ ծերերը յարգել պէտք ենք, մտքերնիս բերելով որ ամենուս վերջը այն է, և ծերերը յարգելը սերմ մը սերմանել է, որ ատեն անցնելով՝ անոր պտուղը մենք պիտի վայելենք ” ։

6․ Պէտք է խեղճ և անկար ծերերուն ցաւակից ըլլալ, անոնց օգնել, վրանին գութ ունենալ, և ձեռքէ եկածը ընել այնպիսեաց ։

7․ Անքաղաքավարութիւնը աւելի ծանր ու

նախատելի կ'ըլլայ՝ եթէ ծերերու դէմ ըլլայ. անոնց առջև զայն ընելը անգամ ամօթ է.

8. Երախտապարտ մի եթէ ինքզինքը յանդըգնութեամբ խոհեմաջարդ ծերերու խրատին անկարօտ ցուցընէ, ծիծաղելի և արհամարհելի կըլլայ։

9. Եթէ հայր մի կամ մայր մի տեսնենք որ իւր տղան կը յանդիմանէ, տղուն կողմ բռնելը՝ ծերութեան և մեծութեան վայելուչ պատիւը պղտիկցընել և նոյնին լրբութեանը և ստահակութեանը համարձակութիւն տալ է։

10. Այս ալ ըսել պէտք է որ եթէ ծերերը ամեն նորաձև բան և նոր սովորութիւն պախարակելու, վար զարնելու միտում չունենան՝ աւելի յարգութիւն և մեծարանք կը գտնեն։

## ԲՆԱԿԱՆ

## ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### Օվչէրօ ըսուած շուները.

Ամերիկա՝ Պրազիլի դէպ 'ի հարաւային ծայրը երկնցող ընդարձակ դաշտերուն մէջ՝ ոչխարներու հօտերը ինքզինքնուն թող տրուած են, Բամբասի մէջ աստիս անդին շրջող ցուլերու և կովերու անհամար գնդերուն նման։ Այս տկար կենդանիները, որոնք ամենևին փաս մի չեն գործեր, բոլորովին երեսի վրայ ձգուած են, և գոմերու (ախոռ) մէջ չդրուելէ զատ՝ եղներուն (Լօքէ-ղ) պէս ալ տարուէ տարի չեն համրուիր։ Միայն մարդկան կողմանէ դրուած արթուն պահապան մի ունին. այս պահապանը Օվչէրօ ըսուած շունն է, որ Սան-Փետրոյի Ռիօ-Կրանտ մայրաքաղաքին մերձակայ տեղուանքը կը սնուցանեն։

Այս հաւատարիմ պահապանը՝ դեռ աչքերը չբացած իւր մօրը քովէն կառնուն և արթուն ոչխարի մը կուտան զայն՝ որ մեծցունէ։ Երբոր չափահաս ըլլայ, ասոր համար մասնաւոր որջի պէս բնակարան մի կը շինեն այն տեղուանքը՝ ուր տեղ որ ոչխարաց հօտը կը յածախէ, և այն հօտին պահապան կը կարգեն զանիկայ։

Այս շունը՝ վայրի շուները կը փախցունէ, որոնք արտաքոյ կարգի շատցած են այս կողմի դաշտերուն մէջ, և միայն աւարով և յափշտակութեամբ կ'ապրին։ Այս շունն է դարձեալ իւր ահագին հաջիւններովը՝ Գարագարա ըսուած անգղները ([illegible]) զարհուրեցնողը, որոնք մոլեգին անյագութեամբ գառանց վրայ կը սլանան և անոնց աչքերը կը խլեն ու կը հանեն։

Օվչէրօ շունը՝ իրեն մօր տեղ բռնած ոչխարին վայրենական խնամքը՝ բոլոր իւր կենաց փութաջանութեամբը կը վճարէ։

Գ. Գ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԹԱՏՐԱԿԱՆ

## ԲՌՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Տե՛ս թիւ 3. երես 21).

Հեր. Իրաւունք ունիք, ես խաբուէր էի։ Շատ աղէկ կընէք, եթէ կարգուիք։

Սկա. Առաջները շատ դէմ էի ամուսնութեան, բայց հիմայ շատ մեծ իրաւունքներ ունիմ կարգըւելու։ Թողունք մէկդի այն մեծ ուրախութիւնը որ պիտի ունենամ աղւոր ամուսին մը ստանալովս՝ որ հազար տեսակ գգուանք պիտի ընէ ինձ, պիտի շոյէ ու յոգնած ժամանակս գլուխս պիտի շփէ, այս ուրախութենէն 'ի զատ կը մտածեմ եթէ այսպէս մնալու ըլլամ, Սկանարէլներուն ցեղը պիտի կորսնցընեմ. թէ որ կարգուիմ պիտի կրնամ դեռ ապրել ուրիշ ինծի նման անձերու մէջ և ինձմէն եղող արարածներ պիտի տեսնեմ և ուրախանամ, այն պզտի կերպարանքները որ երկու կաթիլ ջրի նման ինձ պիտի նմանին, որ տան մէջ շարունակ պիտի խաղան և զիս իրենց հայրը պիտի կանչեն, երբ քաղաքէն ետ դառնալու ըլլամ, անոնք մանկական զուարճալի խենթ ու մենթ խօսքեր պիտի խօսին ինձ։ Ահա կը կարծեմ որ արդէն եղած եմ և բոլորտիքս վեց հատ մանուկներ կը տեսնեմ։

Հեր. Ասկէց աւելի զուարճալի բան չըլլար և ձեզ խրատ կուտամ որ կրցածնուդ չափ շուտով կարգուիք։

Սկա. Անկեղծաբար կըսէք աս, խրատ կուտաք ինձ կարգուելու՞։

Հեր. Ճշմարիտ կըսեմ։ Ասկէ աւելի աղէկ բան չէք կրնար ընել։

Սկա. Արդարև շատ ուրախ եմ որ իբրև ճշմարիտ բարեկամ կը խրատէք զիս այս բանիս համար։

Հեր. Ի՞նչ. կաղաչեմ ըսէք, ո՞վ է այդ աղջիկը որ կուզէք հետը կարգուիլ։

Սկա. Տօրիմէն։

պէս պիտի տպրինք՝ որ երկուքնիս ալ բաներնիս պիտի գտնամք, Նախանձու կասկած մը մեր միտքը չպիտի չփոթէ և բաւական է որ իմ հաւատարմութեանս վերայ վստահ ըլլաք, ինչպէս ես ձեր վերայ ունիմ։ Բայց ինչ ունիք ; երեսնիդ փոխուած կը տեսնեմ։

Սկա. Շոգիներ են, գլուխս կելլեն ։

Տօր. Այսօրուան օրս այնպիսի ցաւ մըն է աղ, որ շատ մարդու կը բռնէ, բայց մեր ամուսնութիւնը այս ամէն բանը պիտի ցրուէ տարածէ ։ Մնաք բարեաւ, ժամանակն կանցնի, մարդու պէս զգեստներ ամակալին չունեցայ որ այս վերայիս քուրջերը հանեմ, կերթամ պէտք եղած զգեստները ծախու առնելու և վաճառականներն ալ ձեզ պիտի խրկեմ։

(Շարունակելի)

## ԱՅԼԵՒԱՅԼՔ

## ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՔ

Հ. Վայելչութեան առաջին կանոնը ո՞րն է, զոր պարտին ծնողք ունենալ իրենց զաւակաց նըկատմամբ.

Պ. Ամենելին անոնց պէտք օրինակ ըլլալ թէ գործքով և թէ խօսքով։

Հ. Տղայութեան առաջին պարտաւորութիւնները կանցնի՞ն ընաւ ։

Պ. Ո՛չ երբէք, որովհետև անոնք են առաջին նուէրները, որք կը կազմեն անձի մը յոյժ ու բարի բնաւորութիւնը ։

Հ. Տղայ մը արդարութեան բնածին զգացում մը ունի՞, թէ որ զինքը անիրաւաբար պատժելու ըլլան ծնողք ։

Պ. Այո՛, որովհետև իր զգացումը խիստ զգայուն է ։

Հ. Հա՞րկ է որ ծնողք խստութեամբ կատարել տան թէ՛ իրենց և թէ ուրիշներու նկատմամբ ունեցած պարտաւորութիւնները ։

Պ. Այո՛, բայց ոչ բարբարոսական կերպով, վասնզի պէտք չէ որ իրենցմէ վախնան անոնք ։

Հ. Ի՞նչ է երկիւղին բնական արդիւնքը ։

Պ. Սէրը մարել. բայց պէտք է որ տղայք սիրեն իրենց ծնողքը։

Հ. Ի՞նչ կը ծագի անոր հետևանքէն, եթէ թուլութեամբ անոնց կամացը, յանցանացը և անճռոնի պակասութեանց ականջ կախելու ըլլան ծընողք ։

Պ. Իրենց վրայ ունեցած բոլոր իշխանութիւննին կը կորսնցընեն, հետևաբար թէ որ գէշ մարդիկ ըլլան անոնք, յանցանքը իրենցը կ'ըլլայ։

Հ. Որո՞նք են այն բարոյական առաքինութիւնները՝ որ տղու մը սրտին մէջ տպաւորելու մեծ հոգ ունենալ պէտք է ։

Պ. Մարդասիրութիւն, ընկերսիրութիւն, բարեսրտութիւն, գթութիւն, և այլն ։

Տ. Գ.

## ՀԱՐՑՈՒՄՆ

Գ.— Ճշմարիտ քրիստոնեայ կրօնաւոր մը ի՞նչ յատկութիւն ունենալ պարտ է ։

## ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Առ Յարգի ընթերցողս իւր.

Գարուն Հայաստանի՝ մեծարոյ ընթերցողներուն սիրելի, հաճելի և միանգամայն ըստ կարողութեան իւրում օգտակար ըլլալը, իւրեն միակ նպատակ ընտրած է, և ոչ ուրիշ բան ։

Գարունը՝ մանաւանդ երկու պարագայներու մէջ (1) իւր ազատ կարծիքը խօսելովը՝ ոմանց անհաճոյ երևցեր է, անոնցմով ազգային և կրօնական վէճերու մէջ մտնելուն համար ։ Ձէինք ուզեր որ այս կարծիքը մեր վրայ ընէին . . . ինչու որ մեր նպատակէն հեռի է Կրօնական և Ազգային վէճեր և կռիւներ ընելը. նոյն յօդուածներով՝ մենք բարեմտութեամբ լոկ մեր ազատ կարծիքը յայտնեցինք . . . Բայց սակայն կը փութանք անոնց հաճելի ըլլալու համար՝ այս տեսակ դիտողութիւնները ևս զանց ընել . . .

Գարունը՝ ինչպէս իւր Յայտարարութեան մէջ խոստացած է, դարձեալ կը կրկնէ թէ Կրօնական և Ազգային խռովայոյզ վէճերէ հեռի պիտի ըլլայ . . .։

Կը փափաքի ևս որ ամէն Հայ հրապարակական թերթերը, որոնք հասարակութեան օգտին նուիրեալ են, ապօրինաւոր վիճաբանութեանց ասպարէզ չըլլան . . . ։ Օրինաւոր բանադատու-

(1). Միութեան վրայ ըրած մէկ փոքր դիտողութեամբը, (տես Գարուն, երես 15) և դերասնապետ Շահնազարեանին յայտնած շնորհակալութեամբը (տես 'ի նոյն, եր. 20).

Այն նիւթիս վրայ մասնաւոր դիտողութիւն մի պիտի գտնեն ընթերցողք Գարնան յաջորդ թիւերէն մէկուն մէջ։

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԿ ՄԻ

*Ճշմարտութիւնը միշտ յաղթող է.*

## ՎԱՐՊԵՏ ԲԱՅՑ ՎԱՏ ԳՈՂ ՄԻ

Մեծ հարստութեան տէր ազնուական մի "Ճշմարտութիւնը միշտ յաղթող է" խօսքը յաճախ կարտասանէր, և ճշմարտութիւնը իր հարստութենէն վեր կը բռնէր, ճշմարտութիւնը՝ որ միշտ կը փայլի, թէպէտև զայն դիմակաւորել ուզեն ոմանք զրպարտութեան և վատութեան միջնորդութեամբ։

Վարպետորդի գող մի, որ անոր հարստութեան և փառաց աչք տնկած էր, լսելով օր մի այս մարդուն բերնէն նոյն խօսքը, կըսէ ինքնիրեն, ես իմ հաւատարիմ օգնականիս հետ (որուն ձեռքով շատ բան տեսած եմ) կրնամ այս խօսքը սուտ հանել. և ասանկով կը տքնի նոյն անդիմադրելի և նուիրական խօսքը առ ոչինչ համարելու հնար մի գտնել։

Ուստի գիշեր մի, իւր օգնականին հետ, նոյն ազնուականին տունը կը մտնեն, խորտուբորտ ճամբայներէ անցնելով, և տան թանկագին և հազուագիւտ ադամանդները և արծաթեղէն, ոսկեղէն և այլն ծանրագին կահ կարասիքը կողոպտելէն և զանոնք ապահով տեղ մի դնելէ ետք՝ կերթան սենեակ մի, աղիւսակին (տամա) սեղանը կը շտկեն և նոյն տեղը անհոգաբար կը քնանան։

Առաւօտեան մէկ երկու ժամ մնացած՝ ազնուականը կարթննայ և տանը տակնուվրայութիւնը տեսնելով՝ իսկոյն ասդին անդին, վեր վար կը վազէ, և 'ի մեծ զարմանս իրեն՝ երկու անձեր սենեակի մը մէջ անհոգութեամբ քնացած կը գտնէ։

Առանց մերձենալու անոնց՝ անմիջապէս Տեսչութեան զինուորներուն իմաց կուտայ, որոնք զանոնք բռնելու կու գան։

Երբ զինուորները զանոնք կարթնցնեն; գողը սաստիկ կը բարկանայ։

— Ո՞վ են այս բիրտ և կոպիտ մարդերը, որ այսպէս իմ հանգստութիւնս աւրելու եկեր են։

— Քաղաքական Տեսչութեան կողմանէ խրկուած զինուորներ ենք, կըսեն, և զձեզ բռնելու եկանք։

— Զմեզ բռնելու եկա՞ք, բայց ինչու, ի՞նչ է պատճառը։

— Որովհետև տանուտէրը զձեզ մեղի մատնեց, թէ դուք գող էք և աւազակ։

— Ասոր վրայ չեմ զարմանար, կըսէ գողը մեծ սառնութեամբ մի, որովհետև անշուշտ եմ որ պարոն տանուտէրը՝ ըրած մեծ կորուստին համար սիրտը սաստիկ այրած է։ Բայց ո՞վ ըսաւ իրեն որ բոլոր գիշերը աղիւսակի խաղ խաղայ և իր ստացուածը, ունեցածը, չունեցածը տուժէ, կերևի թէ իբր ազնուական կորուսածը՝ յետին սինլիքոր մարդու նման՝ ցածութեամբ, վատութեամբ և ստութեամբ ետ առնուլ կուզէ։

Այդպէս գողը կեղծաւոր ձևերով և խօսքերու օձապտոյտ դարձուածներով զինուորները կը համոզէ և ազնուականը բռնել կուտայ։ Զո՛ւր տեղը, կաղաչէ խեղճ տանուտէրը, թէ՝ ի՛նչ աղիւսակի խաղ է այդ, ո՛հ, ի՛նչ կորուստ, սուտ են ըսածները, խաբեբայ, ստախօս և գող է այս;

Պատիւս կը պահանջեմ այս ամբարտաւան, ստախօս և զրպարտիչ անօրէնէն, կըսէ գողը բարկութեամբ մի.....։

Եւ որովհետև գիշերն անհետացեր էր և արևը կը փայլէր, նոյն օրը գողը՝ իւր օգնականին հետ, սիգալով, սխորտալով դատաստան կը դիմէ և այն հարուստ ազնուականը իբրև զրպարտիչ ամբաստանելով այն տեղ բերել կուտայ։

Դատաւորը կը հրամայէ որ կարգաւ խօսին իրենց խօսելիքները։

— Ասածս սուրբ անուան վրայ կերդնում կըսէ գողը, որ երէկ գիշեր ազնուական անձերու պէս աղիւսակի խաղ (տամա) կը խաղայինք, ինքը բոլոր ունեցածը մէջ տեղը դրաւ և բոլորն ալ կորոյս, ասոր վկայ է այս արժանայարգ պարոնը (իր գողակից օգնականը ցուցընելով)...։ Թշուառականը, կաւելցունէ գողը ամարդութեամբ, այս թշուառականը՝ պատիւը ոտքի տակ առած գնաց զիս մերձակայ Տեսչութեան մատնեց և զիս ստախօս, խաբեբայ և գող անուանեց. այս նախատանաց վրէժը անպատճառ կը պահանջեմ, տէր դատաւոր, ինչու որ այն բոլորովին անիրաւ էր, բոլորովին զրպարտութիւն էր..... Բայց այս կերպ նախատուիլս և արհամարհուիլս փառք է ինծի, որովհետև նա իր պատիժը պիտի գտնէ և ես իրաւամբ պիտի փառաւորուիմ քանի որ իրաւունքը իմ զէնքս է։

— Ճշմարտութիւնը միշտ յաղթող է կը պոռայ ազնուականը, կանուխ կամ ուշ կը տեսնես անոր ազդեցութիւնը. կը տեսնէք և կիմանաք դուք ալ,

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

### Զմիւռնիա, 5 Մարտ 1862.

Ամսոյս 10 ին Թրիեսթէն եկող Խօնֆօ անուն Աւստ. շոգենաւուն մէջէն դուրս ելած չուխաները և զանազան ապրանքները :

2 սնտուկ բամպակեղէն Յ. Ոսկանեանին. — 3 պ. չուխայ Ասատրեան եղբարց. — 5 պ. նոյնէն, Րիկ և ընկ. ին. — 1 պ. նոյնէն Մ. Կոստանդեանին. — 1 պ. նոյնէն Փ. Քրուսօլէնտիին. — 1 պ. նոյնէն Տալյին. — 4 պ. նոյնէն Փէլլինկասս Լ. Զիմմէրին. — 2 պ. նոյնէն Խ. Աւաքեանին. — 3 պ. նոյնէն Փ. Ամիրօյին և այլն :

Ամսոյս 13 ին Մարսիլիա մեկնող Քարմէլ անուն Գաղղ. սքրու շոգենաւուն մէջ դրուած ապրանքները :

Քուզինիէրի և որդի 2 պ. մետաքս. — Պ. Վասիլաքաքի 1 պ. նոյնէն. — Ս. Մարութեան 1 սնտ. շերամի հունտ. — Ա. Պօննալ 4 պ. բոժոժ. և այլն :

Ամսոյս 16 ին Մարսիլիա մեկնող Ֆօսէէն ընկերութեան Ռէյնէռ անուն պտուտակաւոր շոգենաւուն մէջ դրուած այլ և այլ ապրանքները :

Յ. Վարպէտեան 251 տոպրակ սև չամիչ. — Փ. Արաիթի 135 տոպ. նոյնէն. — Գ. Ա. Քուլմանի 195 տոպ. նոյնէն. — Ս. Միեէր 10 տոպ. նոյնէն. — Ռաճի Լ. Պարի 20 տոպ. նոյնէն. — Ռէբիթօն է Ֆօնթանա 3 պ. բոժոժ. — Պատէթի եղբարք, 350 տոպ. խաշխաշի հունտ. — Փ. Մարչէլա 20 տոպ. նոյնէն. և այլն :

Մօտ օրերս Լիվըրբուլէն Աֆրիքա անուն Անգղ. սքրու շոգենաւը եկեր է շիտակ Իզմիր գալու .

Մարտ 4 ին Լիվըրբուլէն Կրէչէր անուն Անգղ. սքրու շոգենաւը եկեր է շիտակ Իզմիր գալու :

Փետր. 25 ին Մավրօքօրտադօ անուն Անգղ. սքրուրու շոգենաւը Լօնտօն հասեր է :

Մարտ 8 ին Աժօքս անուն Անգղ. սքրու շոգենաւը քաղաքէս բեռնաւորուած Աթէնքէն անցնելով Լիվըրբուլ ճանապարհորդեց :

Նմանապէս մարտ 9 ին Ալփա անուն Անգղ. սքրու շոգենաւը քաղաքէս բեռնաւորեալ Լիվըրբուլ ճանապարհորդեց :

Մարտ 15 ին Պօլիսէն Քօրէնթեան անուն Անգղ. սքրու շոգենաւը հասաւ քաղաքս Հալքէնսօն Մէրիլէս և ընկերութեան հրամանին :

Նմանապէս նոյն օրը Պօլիսէն Ալպանէզ անուն Անգղ. սքրու շոգենաւը հասաւ քաղաքս Հալքէնսօն Մէրիլէս և ընկերութեան հրամանին.

Մարտ 4 ին Բալտիմոր անուն Անգղ. սքրու շոգենաւը Իզմիրէն Կ. Պօլիս ճանապարհորդեց .

Մարտ 7 ին Մարմարայի ծովուն մէջ ցաւալի դէպք մը կը պատահի .

Ռուսայ ընկերութեան Քօլխիս անուն պտուտակաւոր շոգենաւը նոյն գիշերը առաւօտուն մօտ Սելանիկ երթալու ճամբուն վրայ, այն օրերը Իզմիրէն մեկնող Յունական Արևելեան ընկերութեան Լաքօնիա անուն սքրու շոգենաւուն կը պատահի Մարմարա կղզւոյն մօտ և այն սաստիկ սաստկութեամբ կը զարնուին իրարու, որ Ռուս շոգենաւը տասը վայրկենէն կընկղմի, որուն մէջ կ'ըսեն թէ 70 էն աւելի ճանապարհորդ կը գտնուէր, որոնցմէ շատը հրեայ. և միւս մնացորդը յոյն և տաճիկ էին : Ասոնց մէջէն միայն առաջին նաւապետը, 21 ի չափ նաւաստի 30 ալ ճամբորդ ծովասոյզ ըլլալով կը կորսուին և մնացածները կազատին :

Սակայն Լաքօնիա շոգենաւին ալ յառաջակողմը չարաչար կը վնասուի, այսու ամենայնիւ կարող կ'ըլլայ ճամբան շարունակելով Պօլիս հասնելու ընկղմեալ շոգենաւէն ազատուած ճամբորդներն ալ հետը բերելով:

Մարտ 3 էն մինչև 19 այլ և այլ գլխաւոր ապրանաց ծախքերը և որքանութիւնը :

Վայրի կաղին : 14000 կենդինարի չափ ծախուեցաւ . գինը 76_83 ըստ տեսակին : Պատրաստ 25000 կենդինարի չափ կայ :

Տորոն : 15 օրուան միջոցին մէջ 1000_1200 պալէայի չափ ծախուեցաւ : Գինը 225_250 ըստ տեսակին : Շուկային մէջ պատրաստ 5_5500 պալեայ կը գտնուի :

Բամպակ : 500 պալէայի չափ ծախուեցաւ Քրքաղաճի տեսակէն, գին 440_450 կենդինար Գասապայինը 415_420 : Պայընտրի տեսակէն բնաւ ծախք չկայ, իսկ Սուպուճայինը 450_460 Հրապարակիս մէջ պատրաստ ապրանք քիչ մնացեր է : Ափիոն : 70 կողովէն աւելի ծախուեցաւ, գինը 126_128 չէքին : Շուկային մէջ 1120 կողով կայ :

Բուրդ : բնաւ ծախք չկայ և ոչ ալ այնչափ ապրանք կայ հրապարակիս մէջ:

ՏՆՕՐԷՆ
ԴՐ. Գ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ